չատրճիք եւ չատրնի յոլով եւ մեծագին· եւ սէլվի աղաճէ սնտուկք։

ՍՈՒԼՈՒ ՄԱՆԱՍՏՐ

Եւ այլ օրն գնացաք ի Սուլումանասար որ մերձ է Եօթն Ղուլան, ուր կայ Հայոց մեծ Եկեղեցի մի վիմաշէն եւ զմրէթաձեւ, թաղաւորաշէն, որ կոչի Սուրբ Գեւորք, ի փառաւոր եւ բարձրաւանդակ տեղոջ եւ ծովահայեաց· եւ ասին թէ Կոստաս թագաւորն որդին Կոստանտիոսի շինել է տվել· քանզի զարմանալի շինուածք էին շուրջանակի՝ դրախտք, պաղչայք, բուրաստանք, այապմաք, պարտէզք, մրգաստանք, եւ ջուրք բարիհամ, այլ եւ բազում բնակութիւնք կարգաւորաց եւ աշխարհականաց, եկաց եւ բնակաց։ Եւ կայր ի բարձր տեղ դարպաս մի փոքրիկ, որ հայէր ի վերայ ծովու, յոյժ գեղեցիկ եւ վայելուչ, ոսկէզօծ եւ զանազան դեղօք նկարեալ եւ յօրինեալ պայծառ· եւ առջեւ սրֆայ մի մեծ թավանլու, սեղանատեղ որ ի շող ժամու եւ տօթ անդ նստեալ ոք՝ այլ ոչ կամէր անտի գնալ։ Այլ եւ եկեղեցնայ թիկունքն կայր քարուկիր կամար, նեղ եւ երկայն, նման էտրնու Ալի փաշի, կամ Պուրսու Կէլնճիկին· եւ շուրջ ու բոլորն նկարք պատկերաց ՅԺԸ· հայրապետաց եւ ի գլուխն Քրիստոս եւ աջմէ Կոստանդիանոս

348 յոլով։ — 364 ոսկէօծ։ — 367 շող։ — 368 եկեղեցնա։